



# Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Ե. — ՇՐՋԱՆ ԻԱ. 1888 ՏԱՐԻ ԻԱ. ՄԱՅԻՍ 31

## ԿՐՕՆԱԿԱՆ

Հ Ի Ի Ա Ն Դ Ը.

(Մատ. 25. 36.)

Համբերութիւնով ու լռիկ մնջիկ կտանեմ, ինչ որ Աստուած կամենում է, որ ես քաշեմ. երբէք չեմ տրտնջիլ, երբէք չեմ գանգատուիլ, որովհետեւ գիտեմ, որ Նա ինձ սիրում է: Հիւանդ լինելովս էլ Աստուծոյ սիրելի զաւակներին հաւասար մէկն եմ: — Նա միշտ նոյնն է և ամփոփոխ, միշտ ամենիմաստ, միշտ ամենազօր, միշտ ամենողորմ:

Մեր կեանքի բոլոր բարեքներէց, որ Աստուծոյ Հնորհօքն մեզ

պարգևուած են, առողջութիւնն ամենափառաւոր պարգևներից մէկն է: Երբոր արեան հոսանքը թարմ կերպով է վազում մեր երակներէ մէջ՝ և շունչը զօրաւոր և ազատ կերպով մեր կուրծքիցը դուրս գալիս, երբոր մենք մեր մարմինը կարող ենք շարժել, ինչպէս որ ուզում ենք—այն ժամանակ մեր աշխատութիւնն ու գործակատարութիւնն էլ անգուլ և անխոնջ կերպով է առաջ գնում: Մենք զգում ենք, որ ամեն մի լաւ պարտականութիւն սիրով կատարել է ուզում սիրտներս ու այնպէս հեշտ չենք վախենում ու յետ քաշուած մեր անելու գործի այն դժուարութիւններից, որ մեր առաջն են գալի: Մեր սիրտն ուրախութիւնով հանդիպում է ներկային ու մեր աչքը լուրջ ու զուարթ կերպով է մտիկ տալիս ապագային: Երբ որ իմ Տիրոջ ու Աստուծուս կամքը լինի, որ բոլոր ինձ պարգևած երկրաւոր բարիքս ինձանից առնի, ջերմեռանդ սրտով կազայեմ նորան ու կասեմ. Տէր, թող միայն, որ ունենամ առողջ մարմին ու նորա մէջն առողջ հոգի:

Բայց միշտ այսպէս չէ մնում մեր ունեցած կեանքն, ու բոլոր մարդիկ էլ միշտ առողջ ու անցաւ չեն ապրում: Անակրնկալ կերպով, երբեմն գիշերուան մէջ, մեզ վերայ կորող է հիւանդութիւն գալ. մենք չենք իմանում թէ՛ ինչ տեղից սկսուեց այդ հիւանդութիւնը, կամ ինչից առաջացաւ, աւելի ևս չգիտենք՝ թէ երբ և ինչպէս կ'վերջանայ: Երբոր միտք եմ անում իմ ընկերներիս, բարեկամներիս ու ծանօթներիս վերայ, նորանց մէջ չեմ գտնում գոնէ մէկին, որ իւր կեանքի մէջ հիւանդութիւններ տեսած ու քաշած չլինի. երբ որ հէնց ինձ վերայ էլ եմ մտածում, զգում եմ ցաւով սրտի, որ իմ մարմնեղէն պատեանս տկար ու անզօր է:

Թէ ինչ թանկագին բարիք է առողջութիւնը, լաւ հասկանում է մարդս այն ժամանակ, երբոր իւր առողջութիւնը կորցրած է լինում: Ամենայն հարստութիւն, ամենայն երկրաւոր փառք ու փայլ՝ առողջութեան առաջը ոչինչ է: Հիւանդին փափուկ անկողինքի մէջ պառկեցրու, նա իւր քաշած ցաւերիցն ասի կքաշի, մինչդեռ ամենաղքատ մուրացկանն, որ առողջութեան օրհնութիւնն է վայելում, կոշտ գետնի վերայ քաղցր քնում է: Հիւանդի ճաշելու սեղանի վերայ լցրու ամենայն պատուական ու շատ էլ համեղ կերակուրներ ու խմիչքներ:

Հեռացնուր, տար, կորցնուր կասի, և կնախանձի ասրուստի կարօտութիւնն քաշողին՝ որ սեհացն ախորժակովու գոհ սրտով է վայելում: Թագաւորների փառք ու փայլով շրջապատի շոքան, նա անտարբեր այքով մտիկ կուայ ոսկու և ծիրաննայ վերայ, և իրան բաղդաւոր կհամարէր, եթէ որ կարողանար իւր ամենայետին ծառաների յարգով ծածկած յարկի տակն ասրել ու նորանց պէս առողջ կեանք անց կացնել:

Սորա համար ամեն մի մարդու սիրտը շարժում է հիւանդի վերայ մտիկ տալով՝ ու սաստիկ մեղքանում է նորան: Այ որ անտարբեր այքով և առանց սիրտը տիրելու չէ կարող տեսնել հիւանդութիւնից տանջուողի գեղնած այտերը, պղտոր այքերը, մաշուած ու քաշուած երեսը: Մինչև անգամ անագորոյն զինւորն էլ այգպիսի մի հիւանդի առջ իւր կատաղութիւնը կորցնում է, ու այգպիսի մի անբաղդին խնայում: Թեթեւամիտն էլ լուրջ միտք ու կերպարանք է ստանում: Սորա համար եկ յնձ հեա՝ ու մտքովդ մօտեցիր հալուող, մաշուող մի եղբորդ հիւանդութեան անկողինքին, ու միտք բեր, որ դու էլ հողի մի գիւրակործան պատկեր ես:

Հիւանդութիւններն ամեն ժամանակ մեր կեանքի հետ կարեւորապէս կապուած չեն: Ակզբումը մարդս իւր բոլոր անբամներովը կատարեալ էր ստեղծուած: Հազարաւոր մարդիկ ասրեցին մինչև իրանց երկար օրերի վերջն, առանց իրանց մարմնայ կարգի մէջ մի խանգարումն զգալու: Այգպիսիքը մեռան, որովհետև իրանց կեանքի կանխեղի մէջ ձէթի վերջին կաթիլն էլ այրուել, վերջացել էր. նորա զազրած, քաղցր քնի գնացին՝ հանգստանալու համար, ինչպէս որ աշնան ժամանակ հնձուորն, իւր օրուան գործից յետոյ՝ դազրած, պառկում է:

Եթէ որ մենք մի հիւանդութեան սերմն ժառանգած չենք արդէն մեր հօրից ու մօրից, ուրեմն՝ ընդհանրապէս, մեր անրգ-գուշութիւնիցն է միայն, կամ թեթեամտութիւնից, որ մեր ունեցած գեղեցիկ՝ երկնային պարգևը՝ մեր առողջութիւնը՝ փչացել է: Բայց շատ անգամ էլ մի հիւանդութեանն իւր ծածուկ կերպով տարածուած է լինում այն տարերքի մէջ, որ մեզ շրջապատում են: Մենք տեսնում ենք, որ այգ տարերքից յառաջ են գալիս ու տարածուում ամեն տարափոխիկ հիւանդութիւններ: Կամ թէ տարուայ եղանակի խստութիւնն է, կամ

շատ ծերացած լինելը, կամ թէ մի ուրիշ անխուսելի մեր գըլ-  
խին մի գալիք որ մեր մարմնոյ որսլխուլթեան վերայ խանդա-  
րող կերպով է ներգործել: Ամենախելօք բժիշկն անգամ միշտ  
չէ կարողանում հասկանալ այն պատճառը, որից որ առաջ է  
եկել հիւանդութիւնը: Մենք այդ տեղ ուրիշ ոչ մի բան չենք  
կարող անել, այլ միայն փորձանքիցը խնամով զգուշանալ: Բայց  
երբոր այդ փորձանքը մեր գլխին արդէն եկել է, համբերու-  
թեամբ տանել, ինչ որ Աստուած մեր վերայ բերել է:

Մարմինը մարդու սեպհականութիւնը չէ, Աստուծոյ ձեռ-  
քից մեզ փոխ տուած մի բան է, որ պէտք է կրկին յետ տանք.  
մարմինը մեր հոգւոյ գործիքն է, առանց որոյ մեր հոգին չէր  
կարող կատարել աշխարհիս վերայ այն պարտականութիւնն, որ  
Աստուած՝ իրբև ստեղծող ու Տէր՝ նորա վերայ գրել է իւր  
տուած պատուիրանսին: Եթէ որ մարդս պատժուելու արժանի  
է՝ մի մեղք գործելու համար, շատ աւելի ևս պատժուելու ար-  
ժանի է, երբոր իւր իսկ մարմնի վերայ է մեղանշում, ինչու որ  
նա ինքն խլում է իրանից կեանքի բաղդաւորութիւնն և ոյժն,  
այնչափ բարի բաներ անելու, որչափ որ կարող էր անել: Բաւա-  
կան չէ՞, որ մենք մեր թեթեւամիտ անհոգութիւնով կորցնում  
ենք մեր առողջութիւնն և անընդունակ ենք դառնում կատա-  
րելու մեր պարտականութիւնները դէպի Աստուած ու հայրե-  
նիք, մեր քաղաքակիցներն ու մեզ ծանօթ օտարներն ու մօտիկ  
բարեկամներն. այդպիսի մեր անհոգութիւնով կարող ենք աւե-  
լի շուտ բերել մեր վերայ մեր մահուան ժամն: Անկարգ, ան-  
ժուժկալ ուղեղի մարդն, որպէս և իւր թեթեւամիտ մեծամը-  
տութիւնովը զուր տեղն իրան վտանգի մէջ ձգողն՝ այնպէս էլ  
նա, որ իրան չափիցը գուրս փափուկ ու քնքոյշ է պահում ու  
իրան թուլացնում, ընդդէմ՝ իւր կամքին և առաջադրութեանն  
— ինքնատպան է:

Հոգւով մտեցիլը շատ անգամ հիւանդի անկողնին. այդ մա-  
հիճը քեզ համար իմաստութեան մի վարժատուն է: Այնտեղ  
կսովորես դու թէ՛ յիրաւի ինչպէս անվտանգանալի և անկայուն  
է մարդուս բոլոր բաղդաւորութիւնն, որ կախուած է միայն իւր  
մարմնից: Հիւանդութեան մէջ տանջուողն, որին որ դու մտե-  
նումես, երբեմն ծաղկած ուժի պատկեր էր, իսկ այժմ՝ իւր  
փոս ընկած աչքերն ու գեղնած երեսը քեզ ցոյց են տալիս որ

այդ ծաղիկները բոլորն էլ պէտք է թօշնին, թառամին: Այդ մարդն, որոյ մաշուած պատկերն այժմ տեսնում ես, մի ժամանակ եռանդուն գործունէութեան մի օրինակ էր իւր պաշտօնի ու իւր պարտաւորութիւնները կատարելու մէջ. իսկ այժմ անձար, անօգնական պառկած է, իւր ցաւերի աւար ու բաժին դառնալով: Այդ մարդը մի ժամանակ, կարելի է, մի ուրախ ընկեր էր, սիրտ՝ հոգի տուող մի մարդ էր իւր մօտիկ բարեկամների մէջ. իսկ այժմ նորա ընկերն է տխուր միայնութիւնն: Կարելի է, որ դա մի փափկասէր, մի աշխարհասէր մարդ էլ էր. քիչ էր պատահում, որ մտքիցն անց կացնի թէ՛ Աստուած ու յաւիտենական կեանք կայ. իսկ այժմ իւր սրտագին բաղձանքն ու փափագն է, իւր Աստուծոյ հետ հաշտուելը, քանի որ այս աշխարհիցն դեռ չէ հեռացել: Մի հիւանդ, որ իւր անկողնի մէջ տանջւում է, ամենազօրաւոր քարոզ է մարդուս սրտի համար: Մտածիր, սր դու էլ շուտով կարող ես նոյն վիճակի մէջ ընկնել:

Բայց, տեսնելով այսպիսի ամնջանքներ քաշող մի հիւանդ, հարեանցի մի կարեկցութիւն ցոյց տալով չբաւականանաւ, այլ օգնիր որչափ որ կարող ես օգնել՝ քո ծանր հիւանդ եղբայրակցիդ ցաւերը թեթեւացնելու: Մարդասիրութեան գեղեցիկ պարտականութիւնդ կատարիր: Հիւանդի բարեկամն էլ էր, ինչպէս որ Յեսուսն ասում էր, որ մեր ամեն անելու և չանելու գործերի ամենափառաւոր օրինակն է: Ահա դնում արդեօք նա հիւանդների անկողինքի մօտն իւր բարերար ձեռքովը բժշկութիւն տալու ցաւերից տանջուողներին: Նա չէր արդեօք, որ սրտանց կարեկցում ու պաշտպան էր կանգնում՝ կազին, կուրին, բորոտին, խուլին, համրին ու անդամալուծին: Նա չէր արդեօք բոլոր անբաղձների, թշուառների օգնականն ու ապաւէնն: Տեսակ տեսակ հիւանդութիւն քաշողներն, երբ որ լսում էին, թէ տանջուող մարդկութեան բարեկամն իրանց մօտիկ տեղ է եկել, իրանց տանել չէին տալիս արդեօք նորա մօտը: — Քրիստոնէայ եղիր: Յիսուսի աշակերտ, քո օրինակիդ՝ Փրկչիդ նման եղիր: — Իրաւ է, քո ձեռքդ հրաշք գործել չէ կարող, բայց լաւութիւն անել դեռ կարող ես: Քո ձեռքդ՝ ուժից ընկած, շարժել չկարաջող՝ մեռնելու մօտիկ ծանր հիւանդին՝ տեղից վեր կացնել, ոտքի կանգնեցնել, առողջ մարդոց կարգն անց կացնել չէ կարող:

կամ մահը նորանից հեռացնել. բայց կարող է ուժից ընկած հիւանդին սիրով պահպանել, պաշտպանել: Քո բերանիցդ դուրս եկած խօսքովը նորա բոլոր ցաւերը չեն փարատուիլ. բայց քո խօսքդ կարող է մխիթարութիւն լինել թշուառին, որ ուրիշ շատ կողմից ամեն բանից զուրկ է, և ամեն բանի կարօտ: « Հիւանդ էի, ու ինձ տեսնելու չեկար », կասի Յիսուս մի օր նորանց, որ հիւանդին անխնամ են թողել:

Աւելի խնամք տուր աղքատներին և օտարական՝ անձանօթ հիւանդներին: Տեղացին դեռ օգնութիւն ու խնամք կարող է գտնել իւր վերայ ցաւող ու հոգս անող իւրայիններից: Հարուստին դեռ հասնող, օգնող, պահպանող կլինի, նորան՝ ամեն մէկը սիրով կ'ծառայի: Ինչու որ ձեռք է բերել այն, ինչ որ թեթեւացնում է իւր քաշածները:

Գնա՛ աղքատի ու թշուառի խրճիթներն՝ ու տես մի կտոր հացի կարօտ մնացած հօրն ու ցաւերի մէջ տանջուող, տապալկուող մաշուած մօրը, պառկած իւր հիւանդութեան կոշտ անկողինքումն, որին խնամք տանող, խորհուրդ տուող չկայ, որի համար ոչ բժիշկ կայ, ոչ դեղ, այլ միայն լաց են լինում, չորս կողմը հաւաքուած, իւր յուսահատ զաւակներն, այն տեղ է քո պատուաւոր տեղդ, այն տեղն է քո գործելու դաշտդ, ուր որ պիտի հնձես յաւիտենական կենաց համար առատ հունձք, այն տեղ է կատարելութեանդ հասնելու ասպարէզն: Եթէ որ Աստուած քեզ օրհնել է, պարգևելով քեզ երկրաւոր բարիք, քեզ մօտիկ տեղ բնակուողներից հարցնւր, իմացիր աղքատ ընտանիքի ամեն մէկի անունն, իմացիր, ինչպէս են ապրում, իմացիր, եթէ որ նորանց մէջ մէկը հիւանդացել է— դու նորանց պահպան հրեշտակն եղիր: « Ինչ որ դուք այս պատիկներից մէկին արիք, ասաց Քրիստոս, ինձ արիք »:

Այն ողորմութիւնն, որ դու տալիս ես փոպոցներում ու գրուհէդուռ ման եկող աղքատին, իւր ծուլութեան, անգործութեան համար՝ մի օգնութիւն է նորա՝ աշխատանք անելուց, նեղութիւն, չարչարանք քաշելուց փախչելուն համար՝ մի նպաստ է, անհոգ ու անկարգ կեանք անց կացնելուն համար, մի ապահովութիւն է, որով միամուռում է թէ՛ անխելքութիւն է չարչարուիլն՝ ապրուստ ճարելու համար, քանի որ կարելի է հանգիստ ապրել ձրի՝ առանց իրան նեղութիւն տալու:

Բայց եթէ կարողանայիր այս՝ այն տան խեղճ գրութեան ու ողորմելի կերպով կառավարելու մէջը մտնել ու քո աչքովդ կարող լինէիր տեսնելու թէ՛ ինչ նեղութիւններով են իրանց օրը մի կերպ անց կացնում՝ քո այդ աչքերիցդ արտասուքի տեղ արիւն կլթափէր: Կսարսափէիր, տեսնելով թէ՛ ինչպէս մի պաշտի մօտերում, ուր որ փառք ու շառլուութիւն է միայն տեսնուում, բերնով չպատմուելու ափնչափ կարօտութիւններ կան մի անակի մէջ: Կզարհուրէիր դու, որ մի քաղաքում, ուր որ քրիստոնեաներ են բնակուում, յետին աղքատութիւն ու անձարակութիւն կայ, որին հասնող, օգնող, տէրութիւն անող չկայ, մնացել են երեսները պատին—ու այդչափ թշուառութիւնից, որ քաշում են շատ շատերն, հազարաւոր բողբոջներն ո՛չ մէկը տեղեկութիւն չունի: Մինչև այսօր էլ պառկած չէ՞ արդեօք վէրքերով, խոցերով ծածկուած հիւանդ Աղարոսը հարուստի դրան առաջն, որ նորա սեղանիցն ընկած փշրանքներով իւր փորը կշտացնի. այդ Աղարոսը պառկած է մեզ մօտիկ տան մէջ՝ Լ. Բաղի Աստուածամեծից ոչ դի ախանջը չէ ընկնում նորա ախ քաշելն ու վայ տալն իւր գլխին:

Միտք արա՛ ու հոգո՛ք բաշխե՛ք աղբոսը և օտարական հիւանդներէ հաճաք, նորանց խեղճութիւնն ու քաշածները թիթեացնելու մտքով բարեգործական ապաստանարան շինելու, եթէ ձեռքիցդ կգայ:—Մեր նախնեաց ամենագովելի սովորութիւններից մէկն էր, որ նոքա Աստուծոյ օրհնութիւնից հարստութիւն ունենալով, իրանց կարողութեան մի մասն՝ իրանց կտակներով՝ բարեգործական նպատակների համար էին նշանակում, որ գործածուի: Աստուած իրանց տալիս էր լիառատ բարիք ու պարգևներ, նոքա էլ երախտագէտ սրտով իրանց արած կտակներովն իրան յետ էին տալիս: Նորանց բարեպաշտ սիրան, որ Աստուծուն ամենի հայր էր ճանաչում ու կոչում, բաց էր կարեկցելու իրանց խեղճ քաղաքակիցներին ու կարօտներին և նորանց՝ իրանց ժառանգների մէջն էին հաշուում:

Այս իսկապէս քրիստոնէական սովորութիւնը շատ տեղերում հազուագիւտ մի բան է դարձել, շատ երկիրներումն էլ մի այնպիսի բան, որոյ մասին տեղեկութիւն ունեցող չկայ, կարծես թէ՛ մարդիկ ո՛չ լսել են, ո՛չ իմացել: Մեր նախնիքը մեռան. հազարաւոր հիւանդներ, որոնք որ նորանց բարեգործու-

Թիւնովը դեռ այժմ էլ միշտ խնամուճում են հասարակաց բարեգործական շինուածներէ մէջ, միշտ երախտապարտ սրտով ազօթք են անում իրանց այն բարերարներէ համար, որոնց որ չեն ճանաչում, և որոնք որ վաղուց մեռած են, — միթէ մի օր մեզ համար էլ ազօթք չպիտի անեն: Ո՛վ հարուստներ, հէնց հիմիկուանից իմացէք, որ ձեր թոռներն անտարբեր աչքով են նայելու ձեր մարմարեայ մահարձաններին, որ ձեր գերեզմանների վերայ շինուած են: Միայն ծաղրելու են ձեր անպտուղ սնափառութիւնն և ունայնասիրութիւնն, որով ուզում էք եղել ձեր մեռնելուց յետոյ էլ փառք ցոյց առլ: Մի կաթիլ տաք արատաւք, որ երախտագիտութիւնից յառաջացած, ուրախ սրբ սով աչքից կհանէր մի հիւանդ, որ ձեր մահից յետոյ էլ ձեր բարեգործական շինութիւնովն իւր ցաւերը մեղմացնել է կարողացել, աւելի թանկագին կլինէր, քան թէ այն զարգարանքն, որ արհեստաւորներէ քերիչն ու քանդակող գործիքը կարող էր ձեր մահարձանի վերայ շինել:

Քեզ նման մարդու հիւանդութիւնն ու քաշածները միշտ և ամեն տեղ յարգելի և կարեկցելի բան համարիր: Եթէ որ դու նորա բարեկամը չես եղել, այժմ նորա սրտացու մերձաւորն եղիր: Եթէ որ մի ժամանակ նորա թշնամին ես եղել, գնա ու հաշտուիր հետն: Եթէ որ քեզ վիրաւորել է, գնա, ներիր նորան իւր յանցանքն, որ միտարուած ու հանգիստ սրտով քեզանից բաժանուի. կարելի է, որ իրաւունք ունի քեզանից նեղացած լինելու, գնա ու ներողութիւն խնդրիր նորանից:

Շուտ՝ թէ ուշ՝ դու էլ, ուժից ընկած, պէտք է հիւանդանաս ու անկողինքի մէջ դառն օրեր անց կացնես: Այն ժամանակ ոչ մի բալասան, ոչ մի դեղ քո քաշածներդ այնքան չի թեթեացիլ, քան թէ քեզ երջանկացնող այն միտքը թէ՛ ոչ ոք քեզանից դժգոհ չէ, ոչ ոք քեզ վերայ նեղացած չէ, թէ կան բարի սրտի տէր մարդիկ, որ ցաւում են քեզ վերայ ու սրաներից այնպէս ախ են քաշում քեզ համար, որ հետդ գալիս, հասնում է յաւիտենական կեանքն, իսկ քեզ անիծող ոչ մի մարդ չկայ:

Այն ժամանակ, ցաւեր քաշած օրերումդ, քո համբերելովդ՝ փառաւոր կերպով ցոյց տուր քո հաւատդ, որ ունիս քո Փրկչից վերայ, ցոյց տուր քո հընդհանրութիւնդ քո ստեղծու-

զինդ կանթիւն, քո Արարչիդ, որ միշտ ամենայն գթութեամբ ու ողորմութեամբ քեզ առաջնորդել է, և այժմն էլ քեզ չէ մոռացել: Այն ժամանակ փառաւոր կերպով ցոյց տուր քո հաւատագր Աստուծոյ նախախնամութեան վերայ լիակատար և անտրտունջ փատահութեամբ ու սիրտդ չկորսուելով: Քեզ մահ մի ցանկանալ, բայց հանգիստ կերպով աչքդ աշխարհիս փակելուցն էլ մի վախենալ: Միխնաւոր մարդիկ քեզանից առաջ մեռել են, միխնաւորներն էլ քեզանից յետոյ մեռնելու են— աշխարհիս կարգի աստուածային օրէնքն այս է, և աշխարհիս բարեւոյն համար է Աստուծոյ այդ կարգադրութիւնը: Կու, երբոր մեռնես, յաւիտեանական քնով չես ննջելու. իմացիք որ քո հոգիդ արթուն է Աստուծոյ առաջ, ապրում է նորա մէջ: սլանում է կեանքի դէպի աւելի գեղեցիկ հանգամանքներն, ու իւր առաջ արած հոգսերի վերայ յաղթանակելով, ցնծում է և ուրախանում:

Բայց ասենք թէ՛, քո հիւանդութիւնդ մեռնելու հիւանդութիւն չէ, ուրեմն չես մեռնիլ, էլի կառողջանաս— մի՞թէ մի մեծ բաղդաւորութիւն է քեզ համար: Կեանքիդ օրերն երկարելն ուրիշ մի բան չէ, բայց միայն գերեզմանիցդ յետ քաշուել, որ մի քանի տարիներից յետոյ էլի նոյն տեղը հասնես: Երազի նման անց կացող երկրաւոր կեանքդ մի քանի րոպէնէրով միայն քո օրերդ կերկարացնի— և՛ Քրիստոսի խոստման համեմատ՝ քեզ համար պատրաստուած լաւագոյն աշխարհի փառաւորութիւնն, որոյ մէջ պէտք է լինիս, մի քանի օրեր յետ կը ձգուի:

Քո հիւանդութեանդ անկողինքի մէջ էլ մի գաղարիք բարերար կերպով գործելու քո եղբայրակիցներիդ համար: Հիւանդութեան անկողինքիդ մէջ էլ բարիք արած անդադար: Եթէ որ քո առողջ օրերումդ մոռացել ես այս՝ այն բարի գործն անելու այժմ՝ արած, որչափ և ինչպէս որ կարող ես: Քո կեանքիդ ոչ մի օրն անց չկենայ առանց մի քրիստոնէական գործ կատարելու:

Բայց՝ քրիստոնեան՝ թէ՛ հիւանդ լինի՝ և թէ՛ առողջ— միշտ պատրաստ լինի երկրաւորը յաւիտեանականի հետ փոխելու: Քո հոգիդ՝ մեռնելու վերայ արած մտքերովդ միշտ զբաղուած պիտի չլինի, բայց և ապրիր այնպէս, որ մի օր անակնկալ կերպով ու շուտ այս աշխարհիցս կգնաս. այնպէս ուսհիր սիրտդ, որ ա-

մեն մի ժամ պատրաստ լինի խփելուց զազարելու: Այնպէս կարգի դիր քո տունդ, որ եթէ յանկարծ քո վերայ հիւանդութիւն գայ, կամ մեռնես, քեզանից յետոյ մնացող ընտանիքիդ համար ամեն պարտականութիւններդ կատարած լինիս ու պահաս բան չթողած:

Կարգի դիր քո փողոց: Ամեն ժամանակ քո գործերդ կարգի մէջ պահիր այնպիսի զգուշութեամբ ու հաւատարմութեամբ, որ քո մերձաւորներդ, երբոր քեզ կորցնելու լինին, երկու տեսակ կորուստ, երկու տեսակ ցաւ չունենան: Մտածիր թէ՛ ինչպէս պիտի ապրին, եթէ որ այսօր մի տիրալի դիպուած քեզ նոցանից խլէր, ու նոքա վազը մխիթարութիւնից բոլորովին զուրկ մնային: Յոյս մի կապիր թէ՛ դու քո երկարատեւ հիւանդութեանդ միջոցին, կարելի է, դեռ բաւական ժամանակ կունենաս քո տանդ գործերը կարգի դնելու: Չես տեսնում, որ ամեն շաբաթ պատահում է, որ քաջաւոր զմարդիկ յանկարծ անհետանում են աշխարհիցս. տեսնում չես ուրիշ մարդոց էլ, որոնց տանջող հիւանդութիւնն ամեն մի լրջամիտ գործ կատարելու համար սիրտ և ոյժ չեն թողնում վրաները: Բայց քրիստոնեան իւր քրիստոնէութիւնն այնտեղ է ցոյց տալիս, երբոր նա իւր ամեն հանգամանաց մէջ թէ՛ այս անցաւոր աշխարհիս՝ և թէ՛ յաւիտենական աշխարհի քաղաքացի լինելու համար՝ միակերպ պատրաստուած է: Նա անց է կացնում իւր կեանքն ուրախ և միանգամայն արթուն կերպով. նա իւր հաշիւը՝ թէ՛ այս և թէ՛ յաւիտենական աշխարհի համար՝ վերջացնելու պատրաստ է, երբոր էլ հարկաւոր լինի:

Այնպէս, ո՛հ, այսպէս Քոնդ, յաւիտեան Քոնդ լինիմ, իմ Աստուածս, իմ Հայրս: Ամենալաւ Քրիստոնեան ամենաքաջ հերոսն է. ինչու որ Քո իրան պարզեւած ուրախութիւններդ երախտագէտ սրտով վայելելու միջոցին էլ՝ իւր հոգին արդէն առաջուանից իշխում ու բնակում է յաւիտենական դաշտերում: Նա ամեն մի պատահմանքից աւելի զօրաւոր է, ինչու որ ո՛չ մի դիպուած նորա համար անակնկալ չէ. նա մեր գլխին գալու ամեն բաներից աւելի մեծ է, ինչու որ, Քեզ ապաւինելու, ով իմ Աստուած, իւր հոգին ամեն մի իւր գլխին գալու փորձանքից էլ բարձր է սլանում:

Այո՛, իմ երկնաւոր Հայր, Դ՛ու ես իմ ուրախութիւնս: Եր-

բոր ես հիւանդութեան անկողինքումն տանջւում եմ, Դու ես, որ Քո շնորհդ ու ողորմութիւնդ ինձանից պակաս չես անում: Քեզ քաշիր ողորմելի հիւանդիս սիրտն, որ իմ հաւատոս միշտ տնտասան մնայ, այն ժամանակ մահն էլ ինձ համար մի վտանգաբեր բան չի լինիլ:

Թարգ. ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱՓԻՐԵԱՆ

Սբէյն Յակոբայ, Սբճայ Եպիսկոպոսին, աստղեալ Բան Զերբողական Ս.  
Կարապետին և Մլերդին Յակոբանս:

Յիսուս լոյս փառաց որ դամենայն տիեզերս պայծառացոյց ծագումն յայտնութեան քո, յայտնեա՛ առ իս ի նշուղից շնորհաց քոց, որպէս զի լուսաւորեալ քեւ, խօսեցայց զքէն իմաստութեամբ: Քրիստոս լոյս հեթանոսաց՝ որ հալածեցեր զխաւարն անգիտութեան ի չորից կողմանց տիեզերաց, հալածեա՛ զձուլութիւն մտաց իմոց, և զարթո՛ զբանս իմ պատմել զանքրննելի տնօրէնութիւնդ քո: Անսկիզբն նկարագիր, անըսկըզբնականին Աստուծոյ, որ և ամենայն գեղեցիկ նկարագիրք արարածոց՝ քեւ կատարեցան: Շնորհեա՛ և ինձ նկարագրել բան միոյ գեղեցիկ պատկերի: Դու տաս ձրի ամենեցուն, որոց խնդրեն ի քէն զպէսս իւրեանց, տնւր և իմոց բանիցս ի զարմանալի քոյոց իմաստիցդ՝ խօսել զքէն: Դու տաս լոյս արեւու և տապ հրոյ, խոնաւութիւն ջուրց և ծանրութիւն հողոյ: Դու տաս բան՝ բերանոյ խօսք՝ լեզուաց և շարժումն շրթանց՝ առ յայն: Դու տաս խորհուրդ սրտի՝ խսկումն մտաց և բան լեզուի՝ մեկնել զխորհուրդս սրտի: Եւ ամենայն պարգևք ի քէն է և քեւ և վասն քո եղիցի: Չի առանց քո եթէ խօսի սք՝ քակեալ և աւերեալ են բանք նորա:

Առանց ազգման քո, Տէր, բնդունայն է բան, վասն զի մարմին և լոկ շունչ, յոր սչ դու, Տէր զկենդանարար հոգիդ քո, փչեալ իցես ի նմա, դատարկ է ի շնորհաց: Եւ արգ՝ պայծաութիւն միոյ պատկերի զարհուրեցուցանէ զիս հոգևոր գեղեցկութեամբն իւրով: Եւ Դու, Տէր, տնւր ինձ բան, և բաց զշրթունս իմ խօսել վասն նորա, վասն զի դու ես պատճառ